



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՏՈՒ ԵՐԵՒԱՆ Ս. ԽԱՉԻՆ

10 ՄԱՅԻՍ 2020

ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԷՆ (17.1-15)

Ա մ փիլպոլիս եւ Ապողոնիա քաղաքները շրջելէ ետք Պօղոս եւ Շիղա Թեսաղոնիկէ եկան ուր հրեաներու ժողովարան մը կար: Պօղոս ըստ իր սովորութեան ժողովարան գնաց, եւ երեք Շաբաթ օրեր անոնց քարոզեց: Կը բանար ու կը բացատրէր Գիրքերը, անոնցմով կ'ապացուցանէր թէ ի՛նչպէս Քրիստոս պիտի չարչարուէր ու մեռելներէն յարութիւն առնէր, եւ կ'ըսէր. «Այն Յիսուսը զոր ես ձեզի կը քարոզեմ, ա՛ն է Քրիստոսը, խոստացուած Փրկիչը»: Թեսաղոնիկեցիներէն ոմանք հաւատացին եւ Պօղոսի ու Շիղայի յարեցան: Նոյնպէս անոնց յարեցան շատ մը աստուածապաշտ յոյներ եւ նկատառելի թիւով երեւելի կիներ:

Հրեայ առաջնորդներ նախանձեցան, եւ փողոցներէն քանի մը դատարկապորտ անօրէններ հաւաքելով ամբոխ կազմեցին, ամբողջ քաղաքը խռովեցին եւ Յասոնի տան վրայ խուժեցին՝ Պօղոսն ու Շիղան բռնելու եւ ժողովուրդին առջեւ հանելու համար: Բայց երբ զանոնք չգտան, Յասոնն ու քանի մը ուրիշ հաւատացեալներ քաջեցին տարին քաղաքի իշխաններուն առջեւ, պոռալով. «Այն մարդիկը որոնք ամբողջ աշխարհը իրար անցուցին, հիմա մեր քաղաքը եկեր են, եւ Յասոն իր տունը առեր է զիրենք: Ասոնք

բոլորը կայսեր օրէնքներուն հակառակ կը գործեն, որովհետեւ ուրիշ թագաւոր մը կը ճանչնան, Յիսուս անունով»: Այս խօսքերով անոնք խռովեցուցին ամբոխը եւ քաղաքի իշխանները: Սակայն իշխանները Յասոնէն եւ միւս քրիստոնեաներէն երաշխաւորութիւն առնելով ազատ արձակեցին զանոնք:

Հազիւ գիշերը վրայ հասած, քրիստոնեաներ Բերիա ղրկեցին Պօղոսն ու Շիղան, որոնք երբ հոն հասան՝ հրեաներու ժողովարանը գացին: Բերիայի հրեաները աւելի ազատամիտ էին քան Թեսաղոնիկեցիները, ուստի մեծ յօժարութեամբ ընդունեցին Աստուծոյ խօսքը եւ ամէն օր Գիրքերը կը քննէին, տեսնելու համար թէ ճշմարի՞տ են Պօղոսի քարոզածները: Անոնցմէ շատեր հաւատացին: Նմանապէս հաւատացին բազմաթիւ ազնուական յոյն կիներ եւ այրեր: Բայց երբ Թեսաղոնիկէի հրեաները իմացան թէ Պօղոս Բերիայի մէջ եւս Աստուծոյ խօսքը քարոզեց, հոն ալ եկան ժողովուրդը գրգռելու եւ խռովութիւն ստեղծելու համար: Ուստի հաւատացեալները անմիջապէս Պօղոսը մինչեւ ծովեզերք ղրկեցին, իսկ Շիղա եւ Տիմոթէոս հոն մնացին: Պօղոսի ընկերացողները զինք մինչեւ Աթէնք հասցուցին եւ ապա Բերիա դարձան, Շիղայի եւ Տիմոթէոսի համար Պօղոսէն պատուէր առնելով որ շուտով գան իր մօտ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.1-10)

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն յաւիտենական կեանքին մասին,

որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք “հաղորդակից ենք իրեն” եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք անա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Եթէ ըսենք “մեղք չունինք”, մենք մեզ կը խաբենք եւ կը մերժենք ճշմարտութիւնը ընդունիլ: Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք թէ Աստուած որ արդար է՝ պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն: Եթէ “մեղք չգործեցինք” ըսենք, ստախոս կը հանենք զԱստուած, քանի իր խօսքը չենք ընդունիր:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ
(7.14-24)

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաներ կը զարմանային եւ կ'ըսէին.

«Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»: Յիսուս պատասխանեց անոնց.

«Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս զրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ հեղինակութեամբ կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք զրկողին փառք կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»: Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեցի էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները - թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՞ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»:

«Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս զրկեց»:

«Երեւոյթներէն մի՞ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»: